ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/105

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Մասնակից՝ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ.-ի թիվ 26/26-1/11019-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/976-2019 գրության հիման վրա, 02.07.2019թ.-ի «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.06.2019թ. թիվ ՊՆ/02/976-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինանյութի և տնտեսական ապրանքների» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 32 մասնակիցներ, այդ թվում՝ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն, որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ:

«Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն, որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ գնահատող հանձնաժողովի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզեց, որ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի, որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ, կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 11.06.2019թ. կայացած նիստում որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից ծանուցմամբ պահանջված անահամապատասխանությունները ներկայացվեցին 13.06.2019թ., որը հանձնաժողովի կողմից չքննարկվեց, քանի որ վերը նշված փաստաթղթերը ներկայացված էր օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի պահանջները, որոշել է մերժել «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն, որը համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա հանդես էր գալիս «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են վերը նշված կազմակերպությունների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.07.2019թ. գրությամբ դիմել է «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ.-ի թիվ 26/26-1/11019-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ֆինանսների նախարարությունը 02.07.2019թ. թիվ 26/26-1/11019-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) (հետայսու նաեւ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

նպատակով նախաձեռնել է ընթացակարգ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի գրության հիման վրա:

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված ընթացակարգի վերաբերյալ առարկում ենք հետևյալ պատճառաբանությամբ եւ հիմնավորմամբ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել էր ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինանյութի եւ տնտեսական ապրանքների» «ՀՀ ՊՆ, ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու՝ նաեւ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ էր ներկայացրել Ընկերությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11 հունիսի 2019թ. թիվ 10 արձանագրությամբ որոշել է «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 եւ 01.08.2018թ. կնքված N012-AC-18/07 ծածկագրերով պայմանագրերով մատակարարկած ապրանքները հանդիսանում են շինարարական նյութեր, իսկ ընթացակարգի հրակերով 6-րդ չափարաժնի համար որպես նմանատիպ են սահմանվել տնտեսական ապրանքների մատակարարման պայմանագրերը եւ միեւնույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետը նշված ապրանքատեսակները չեն դասվում համանման (նմանատիպ) համարվող տնտեսական գործունեության նույն խմբում: Վերոնշյալ հիմնավորմամբ գնահատող հանձնաժողովը որոշեց «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության կոնսորցիում («Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) կողմից ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 ծածկագրով պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան (ոչ նմանատիպ):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ N 526-Ն որոշմամր հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը եւ առաջարկել մասնակիցներին մինչեւ կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը 14 հունիսի 2019թ. Ժամը՝ 14:00-ին կայացած նիստի թիվ 11 արձանագրության 1.2 կետի 2-րդ պարբերությամբ որոշել է «Առկա անհամապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան «Վիէյչ գրուպ» ՍՊ

ընկերության (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) կողմից սահմանված ժամկետում որեւէ փաստաթուղթ չներկայցրեց: Մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու նպատակով նոր նմանատիպ պայմանագիրն ուղարկվեց սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի դա գնահատող հանձնաժողովի կողմից չքննարկվեց:

1.3 կետով գնահատող հանձնաժողովը որոշեց «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան եւ մերժել հայտը:

1.4 կետով հանձնաժողովը որոշեց «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության (կոնսորցիում «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:»

Ընկերությունն Ընթացակարգին մասնակցելով 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել եւ գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է անհամապատասխանությունը շտկած փաստաթղթերը:

11 հունիսի 2019թ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցված լինելու պարագայում Ընկերությունը 12 հունիսի 2019թ ներկայցրել է շտկված փաստաթղթերը: Հանձնաժողովը 14 հունիսի 2019թ արձանագրության 1.2 կետով որոշել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել անհամապատասխանությունը շտկած փաստաթղթերը: Հանձնաժողովի որոշման ուսումնասիրությունից պարզ չէ, թե հանձնաժողովը ինչպես է հիմնավորել եւ պատճառաբանել, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել փաստաթղթերը:

Նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելը ենթադրում է, որ մասնակիցը հնարավորություն ուներ հունիսի 12-ին ներկայացնելու շտկված փաստաթղթերը: Հանձնաժողովը, նիստի կասեցումից հետո հաջորդ աշխատանքային օրը, 13 հունիսի 2019 թվականին արդեն իսկ իր տրամադրության տակ ուներ շտկված փաստաթղթերը: 12.06.2019 թվականին գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին ուղարկվել են փաստաթղթերի շտկված տարբերակները, այս պարագայում որ փաստական իրավիճակից ելնելով է հանձնաժողովը որոշել, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել:

Փաստաթղթերի շտկված տարբերակը 12 հունիսի 2019թ. ժամը 23:32-ին ուղարկվել է a.maghaqyan@mil.am էլեկտրոնային հասցեին::

ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն ժամկետների տրամադրումը աշխատանքային օրերով սահմանելով չենք կարող հաշվանալ աշխատանքային ժամը, պետք է հաշվանալ այն օրերը որոնք չեն համընկնում տոն կամ հիշատակի կամ հանգստյան օրերի հետ:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք.

«Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությունը համատեղ գործունեության պայմանագրով հանդես է գալիս օտարերկրյա կազմակերպության «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ, որը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում եւ պահանջվող շտկված փաստաթղթերը պետք է տրամադրեր «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունը:

Հայտնի իրողություն է, որ 12.06.2019 թվականը ՌԴ-ում ոչ աշխատանքային օր է եղել Ռուսաստանի անկախության հռչակման կապակցությամբ, թեեւ «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերությունը շտկված փաստաթղթերը տրամադրել է 12.06.2019թ. ժամը 23.32-ին, սակայն, եթե նույնիսկ դրանք ներկայացվեին 13.06.2019թ., ապա գնահատող հանձնաժողովը պետք է գնահատեր, որ դրանք ներկայացվել են սահմանված ժամկետում ղեկավարվելով վերոգրյալ իրավական նորմերով սահմանված պահանջից եւ չէր կարող խտրական մոտեցում դրսեւորեր, այլապես կխախտվեր հավասարության իրավունքը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են մերժել «ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11019-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը.

4. <u>ՍՑ-LO-2019/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ ՊՆ կարիքների համար շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ):

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) հայտով ներկայացրած թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումում, որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե է նշել 5635368@gmail.com:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.04.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 11.06.2019թ.-ի կայացած նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 03.04.2018թ. կնքված NC10-AO-18/3 և 01.08.2018թ. կնքված N012-AC-18/07 ծածկագրերով պայմանագրերով մատակարարված ապրանքները հանդիսանում են շինարարական նյութեր, իսկ ընթացակարգի հրավերով՝ 6-րդ չափաբաժնի համար որպես նմանատիպ են սահմանվել տնտեսական ապրանքների մատակարարման պայմանագրերը: Միևնույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետը՝ նշված ապրանքատեսակները չեն դասվում համանման (նմանատիպ) համարվող տնտեսական գործունեության նույն խմբում:

Վերոնշյալ հիմնավորմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 ծածկագրով պայմանագիրը

գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան (ոչ նմանատիպ):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի կողմից www.armeps.am կայքի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 11.06.2019թ. ծանուցում է ուղարվել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (5635368@gmail.com) և առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ առկա անհամապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան՝ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չներկայացվեց: Մասնակցի կողմից «Մանագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու նպատակով նոր նոր նմանատիպ պայմանագիրն ուղարկվեց սահմանված ժամկետի խախտմամբ, ուստի դա Հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) 5635368@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեի արտատպման համաձայն՝ Մասնակիցը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին՝ a.maghaqyan@mil.am, 12.06.2019թ.-ին ժամը 23:32-ին ներկայացրել է Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ.-ի թիվ 26/26-1/11019-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ …. մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 11.06.2019թ.-ի կայացած նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշ ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 ծածկագրով պայմանագիրը գնահատվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան (ոչ նմանատիպ), ինչով պայմանավորված հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի կողմից www.armeps.am կայքի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 11.06.2019թ. ծանուցում է ուղարվել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (5635368@gmail.com) և առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) 5635368@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեի արտատպման համաձայն՝ Մասնակիցը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին՝ a.maghaqyan@mil.am, 12.06.2019թ.-ին ժամը 23:32-ին ներկայացրել է Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

Այս պարագայում, մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ քարտուղարի a.maghaqyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեից 11.06.2019թ.-ին ստանալով Կարգի 47-րդ կետին համապատասխան ծանուցում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ 12.06.2019թ.-ին /1 աշխատանքային օրվա ընթացքում/ Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել Հանձնաժողովի կողմից արձանագրված անհաապատասխանությունների շտկումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ առկա է «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը քարտուղարի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու ապացույցը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը չի կարող համարվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով: Ուստի նման պայմաններում, «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ.-ի թիվ 26/26-1/11019-2019 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**